ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

19 հոկտեմբերի 2011 թ. Թիվ 86-Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 06.05.1997թ. ՆՀ-728 հրամանագրի 1.16, 1.17, 1.18 կետերով՝

կարգադրում եմ.

1. Ստեղծել ՀՀ Տավուշի մարզի սոցիալական զարգացման մարզային եւ տարածաշրջանային ծրագրեր մշակող աշխատանքային խմբեր հետեւյալ կազմերով՝
1) Սոցիալական զարգացման մարզային ծրագիր մշակող աշխատանքային խումբ /հավելված 1/
2) Սոցիալական զարգացման տարածաշրջանային ծրագրեր մշակող աշխատանքային խմբեր /հավելված 2/:
2. Տարածաշրջանային աշխատանքային խմբերի աշխատանքների կազմակերպման պատասխանատուներ նշանակել մարզպետարանի աշխատակազմի ՍԾՏԳ-ների պետեր Գ. Մելքումյանին, Կ. Հովհաննիսյանին, Ս. Բեգլարյանին եւ Հ. Խաչատրյանին:
3. Մարզային աշխատանքային խմբի աշխատանքների կազմակերպման պատասխանատու նշանակել ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Դավթյանին:
4. Աշխատանքային խմբերի կողմից սոցիալական զարգացման ծրագրերի մշակման վերջնաժամկետ սահմանել ս/թ հոկտեմբերի 31-ը:
5. Սույն կարգադրության հսկողությունը դնել ՀՀ Տավուշի մարզպետի տաղակալ Լ. Սարգսյանի վրա:
6. Կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

19 հոկտեմբերի 2011թ.
Ք. Իջեւան

Հավելված 1
Հաստատված է ՀՀ Տավուշի
մարզպետի 19.10.2011թ.
թիվ 86-Ա կարգադրությամբ

Սոցիալական զարգացման մարզային ծրագիր մշակող աշխատանքային խումբ՝

1. Դավթյան Սվետլանա – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
2. Դովլաթբեկյան Կարինե - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության եւ սոցիալական ապահովության վարչության պետ
3. Փաշինյան Աշոտ - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ
4. Մարկոսյան Ավթանդիլ – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց եւ երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ
5. Ճաղարյան Նարինե - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության եւ սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԴԱՎԹՅԱՆ